SOUTHERN CALIFORNIA EDISON®

ՁԵՐ ՀԱՄԱՅՆՔՆ ԱՊԱՀՈՎ ՊԱՀԵԼԸ

Բարձր հրդեհավտանգ տարածքներում Արտակարգ Իրավիճակներին և Հանրային Անվտանգության Էլեկտրաէներգիայի անջատումներին նախապատրաստվելը

Հունիս 2025

ՊԱՏՐԱՍՏՎԵՔ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՀՆԵՐԻ ՍԵԶՈՆԻՆ

Անցած հունվարին տեղի ունեցած սրտաճմլիկ հողմփոթորիկը և անտառային հրդեհները Հարավային Կալիֆոռնիայի առջև ծառացած եղանակային ծանր ռիսկերի աղետալի օրինակներ են: Այս միջադեպերն ընդգծում են անտառային հրդեհների մեղմման մեր ծրագրերի կարևորությունը և շարունակաբար ընդլայնում այն գործիքները, որոնք մենք օգտագործում ենք ենթակառուցվածքների դիմակայունությունը պահպանելու համար:

Մենք շարունակում ենք կատարելագործվել և ցուցադրել զարգանալու մեր հանձնառությունը: Մենք մեծապես ներդրումներ ենք կատարել ստորգետնյա էլեկտրահաղորդման գծերի, պաաշտպանիչ ծածկույթով պատված լարերի, արագ գործող ապահովիչների, բուսականության կառավարման և նոր տեխնոլոգիաների մեջ՝ կոմունալ սարքավորումների հետևանքով առաջացած հրդեհների ռիսկը նվազեցնելու համար: Այս կարծրացման ջանքերը բարձրացնում են նաև հուսալիությունը ուժեղ քամիների և փոթորիկների ժամանակ:

Ձեր անվտանգությունը մեր գերակա առաջնահերթությունն է: Երբ առկա են հրդեհավտանգ եղանակային պայմաններ, մենք կարող ենք ժամանակավորապես անջատել հոսանքը որոշակի ժամանակահատվածով՝ կոմունալ սարքավորումների հետևանքով առաջացած հրդեհի վտանգը նվազեցնելու համար: Սա հայտնի է որպես Հանրային Անվտանգության Էլեկտրաէներգիայի Անջատում (Public Safety Power Shutoff PSPS), և դա կյանքեր է փրկում:

Փոփոխվող կլիման, այս տարի միջինից ցածր տեղումները և ուժեղ քամիների երկարատև ժամանակահատվածները մեծացնում են հրդեհի տարածման հնարավորությունը: Հնարավոր է, որ մենք պետք է ավելի հաճախ օգտագործենք PSPS, որպեսզի օգնենք կանխել հրդեհները և անվտանգ պահել մեր համայնքները:

Ցանկացած ժամանակով էլեկտրաէներգիայից զրկվելը դժվար, հիասթափեցնող և կյանքի ընթացքը խափանող երևույթ է: Մեր առաքելությունն է պահել էլեկտրաէներգիան միացված, երբ դա անվտանգ է անել: Անտառային հրդեհների ռիսկերը նվազեցնելու և արտակարգ իրավիճակների պլանավորման համար մենք անում են հետևյալը.

- Տեղադրում ենք պաշտպանիչ ծածկույթով լարեր և էլեկտրահաղորդման գծերի տեղափոխում ենք ստորգետնյա:
- Համագործակցում ենք տեղական գործակալությունների հետ՝ մաքրելու ավելի շատ բուսականություն մեր ենթակառուցվածքի շուրջ՝ էլեկտրական սարքավորումների հետ շփումը կանխելու համար:
- Բարելավում ենք մեր կայքը՝ PSPS միջադեպերի ընթացքում ավելի լավ թարմացումների համար:
- Առաջարկում ենք զեղչեր կրկնօրինակ մարտկոցների և գեներատորների համար կրիտիկական օբյեկտների համար:

Այս տեղեկագիրը օգնում է ձեզ պատրաստվել արտակարգ իրավիճակներին և PSPS անջատումներին: Պլան կազմեք, ապահով մնացեք և եղեք տեղեկացված:

Jill C. Anderson, SCE Գործադիր Փոխնախագահ և Գլխավոր Գործառնական Տնօրեն

Ի՞ՆՉ Է ՀԱՆՐԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀՈՍԱՆՔԱԶՐԿՈՒՄԸ (PSPS):

PSPS-ն այն է, երբ էլեկտրական կոմունալ ընկերությունը ժամանակավորապես անջատում է հոսանքը՝ կոմունալ սարքավորումների հետևանքով առաջացած անտառային հրդեհի վտանգը նվազեցնելու համար: Հրդեհավտանգ եղանակային պայմանները, որոնք ներառում են ուժեղ քամիներ, չոր բուսականություն և ցածր խոնավություն, առաջացնում են PSPS միջադեպեր: Երբեմն PSPS-ը տևում է ավելի քան 24 ժամ:

Իմացեք ավելին PSPS-ի մասին և ստացեք հաճախակի տրվող հարցերի պատասխանները sce.com/psps կայքում:

ԳՐԱՆՑՎԵՔ ԱՀԱԶԱՆԳԵՐԻ ՀԱՄԱՐ

Ահազանգերը հասանելի են յուրաքանչյուրի համար:

Նախքան պոտենցիալ PSPS-ը, մենք ծանուցումներ կուղարկենք էլեկտրոնային փոստի, տեքստային կամ հեռախոսային հաղորդագրության միջոցով: Մենք ձեզ տեղյակ կպահենք հոսանքազրկման ժամանակ և երբ հոսանքը վերականգնվի:

Նախապես ծանուցումները կարող են հնարավոր չլինել անսպասելի եղանակային պայմաններում:

Գրանցվեք PSPS ծանուցումների համար անգլերեն կամ այլ մատչելի լեզուներով sce.com/pspsalerts հասցեով:

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Հասանելի են հիմնական ծառայություններ և ռեսուրսներ, որոնք կօգնեն ձեզ պատրաստվել արտակարգ իրավիճակին և նավարկելու PSPS միջադեպերերը:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ PSPS-Ի ՀԱՄԱՐ

- Ունեցեք արտակարգ իրավիճակների պլան՝ ցանկացած հոսանքազրկման ժամանակ ձեր ընտանիքն ապահով պահելու համար: Դա ներառում է արտակարգ իրավիճակների համար անհրաժեշտ իրերի գտնվելու վայրի ցանկը, ինչպիսիք են ջրի շշերը, մարտկոցով աշխատող ռադիոն, լապտերները, առաջին օգնության փաթեթները, լրացուցիչ վերմակները և աշխատանքային մարտկոցները:
- Հղում կատարեք մեր վերջին ստուգաթերթին՝ հոսանքազրկումներին պատրաստվելու համար:
- Էջանշեք հոսանքազրկման քարտեզը կամ ներբեռնեք MySCE բջջային հավելվածը:

ԳԵՆԵՐԱՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՄԱՐՏԿՈՑՆԵՐԻ ԶԵՂՉԵՐ

- Անվճար պահուստային մարտկոցը, որն օգնում է բժշկական սարքերի հոսանքազրկումների ժամանակ, հասանելի է հաճախորդներին, ովքեր ապրում են բարձր հրդեհավտանգ տարածքներում և ընդգրկված են SCE-ի Բժշկական ելակետային նպաստի ծրագրում:
- Այցելեք SCE Marketplace շարժական էլեկտրակայանների և գեներատորների համար: Ստացեք մինչև հինգ $150 զեղչեր որակավորվող բնակելի շարժական էլեկտրակայանների և մինչև $600՝ որակավորվող շարժական գեներատորների համար:



ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

- Գտեք ռեսուրսներ և աջակցություն հասանելիության և ֆունկցիոնալ կարիքներ ունեցող հաճախորդների համար, ինչպես նաև համայնքային օժանդակության և արտակարգ իրավիճակների պատրաստվածության մասին տեղեկատվություն sce.com/afn հասցեում:
- Եթե դուք կամ ձեր ընտանիքի որևէ անդամ առողջական պատճառներով ապավինում է էլեկտրաէներգիայի վրա, օգտագործեք այս ստուգաթերթը՝ PSPS միջադեպերերի ժամանակ պատրաստվելու և անվտանգ մնալու համար:
- SCE Համայնքային Ռեսուրսային Կենտրոնները և Համայնքային Անձնակազմի Տրանսպորտային միջոցները տեղակայվում կամ ուղարկվում են տուժած համայնքներ՝ PSPS միջադեպերի ժամանակ հաճախորդների էական սպասարկում ապահովելու համար: CRC-ի և CCV-ի վայրերը նշված են PSPS-ի ժամանակ հոսանքազրկումների քարտեզի վրա:
- Երկարատև հոսանքազրկումների ժամանակ հյուրանոցային զեղչերին կարելի է ծանոթանալ sce.com/hotel-discounts կայքում:

ԱՊԱՀՈՎ ՄՆԱՑԵՔ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՆՋԱՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

- Երբեք մի դիպչեք կամ մոտենաք խոցված էլեկտրագծին. մնացեք առնվազն 100 ոտնաչափ հեռավորության վրա: Անվտանգ լինելու դեպքում անմիջապես զանգահարեք 911:
- Անջատեք սարքերը և էլեկտրոնային սարքավորումները՝ խուսափելու վնասից կամ տվյալների կորստից: Եթե ունեք էլեկտրական դարպասներ կամ ավտոտնակի դռներ, սովորեք դրանք ձեռքով օգտագործել:
- Բենզինով և գազով աշխատող գեներատորները երբեք չպետք է օգտագործվեն շինության ներսում: Գեներատորները և մարտկոցները չպետք է ուղղակիորեն միացված լինեն տան էլեկտրական ցանցին՝ առանց համապատասխան անվտանգության սարքավորումների: Դրանցից յուրաքանչյուրն անելը վտանգավոր է ձեզ և վերանորոգման անձնակազմի համար:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՀՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ

Վերջին մեկ տարվա ընթացքում մենք մոտավորապես 800 մղոն մերկ մետաղալար փոխարինեցինք պաշտպանիչ ծածկույթով լարերով: Այս պաշտպանիչ ծածկույթով լարերը կանխում են բուսականության հետ շփումը, որը կարող է հանգեցնել բռնկման և նվազեցնել ընդհատումները մոտավորապես 70% -ով՝ դարձնելով էլեկտրական սպասարկումն ավելի հուսալի: Մինչև տարեվերջ, մենք ակնկալում ենք հասնել խոշոր հանգրվանի կարծրացման մոտավորապես 90% մեր ընդհանուր բաշխման գծերի բարձր հրդեհավտանգ տարածքներում:

ՑԱՆՑԻ ԿԱՐԾՐԱՑՈՒՄ

ՄԵՏԱՂԱԼԱՐ՝ ՊԱՇՏՊԱՆԻՉ ԾԱԾԿՈՒՅԹՈՎ

6,450+

ԷԼԵԿՏՐԱԼԱՐԵՐԻ ՄՂՈՆՆԵ'Ր ՏԵՂԱԴՐՎԱԾ ԵՆ 2018 ԹՎԱԿԱՆԻՑ

ԹԻՐԱԽԱՅԻՆ ՍՏՈՐԳԵՏՆԱՑՈՒՄ

39

ԷԼԵԿՏՐԱԼԱՐԻ ՄՂՈՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՎԵԼ ԵՆ

44%

HFRA ԲԱՇԽԻՉ ԳԾԵՐՆ ԱՐԴԵՆ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ Է

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ

ՏԵՂԱԴՐՎԵԼ Է 2018 ԹՎԱԿԱՆԻՑ

ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՅԱՆՆԵՐ

~1,870

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՀՆԵՐԻ ՏԵՍԱԽՑԻԿՆԵՐ

200

ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

1.5 ՄԻԼԻՈՆ+

ԱՎԱՐՏՎԵԼ Է HFRA-ՈՒՄ

ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2.5 ՄԻԼԻՈՆ+

HFRA-Ի ԿՏՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄՆԵՐ

ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄ

SCE-Ի ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՈՒԺԸ ԱՐՁԱԳԱՆՔԵՑ

88

ՀՐԴԵՀՆԵՐԻ ԲՈԼՈՐԸ SCE-Ի ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ, 2024 ԹՎԱԿԱՆԻՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ ՎԵՐՋԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՅՑԵԼԵՔ
sce.com/mitigation



ԻՆՉՊԵՍ Է ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ ՕԳՆՈՒՄ ՄԵԶ ՎԵՐԱՀՍԿԵԼ ԵՂԱՆԱԿԸ

Մեր ներքին փորձագետների թիմը օգտագործում է առաջադեմ տեխնոլոգիաներ եղանակը վերահսկելու համար: Մենք օգտագործում ենք ավելի քան 1,800 եղանակային կայաններ և 200 անտառային հրդեհների տեսախցիկներ բարձր հրդեհավտանգ տարածքներում՝ իրական ժամանակի պայմանները վերահսկելու և մեր եղանակի մոդելավորումը բարելավելու համար: Մենք նաև օգտագործում ենք սուպերհամակարգչային տեխնոլոգիան՝ գիշերային ավելի քան 100 միլիոն հրդեհի սիմուլյացիաներ վարելու և կրիտիկական եղանակի կանխատեսումներ ապահովելու համար: Այս տեղեկատվությունն օգնում է կանխատեսել հոսանքի հնարավոր անջատումների տարածքները և ժամանակները՝ էլեկտրական սարքավորումների հետևանքով առաջացած անտառային հրդեհը կանխելու համար:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՀՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

2025 թվականին մենք շարունակում ենք անտառային հրդեհների մեղմացման աշխատանքները, ներառյալ.

- Անցկացնելով պաշտպանիչ ծածկույթով լարեր, տեղափոխելով էլեկտրահաղորդման գծերը ստորգետնյա և փորձարկելով նոր տեխնոլոգիաները բարձր հրդեհավտանգ տարածքներում: Այս բարելավումներն էներգետիկ ցանցը կդարձնեն ավելի դիմացկուն և հուսալի ուժեղ քամիների և փոթորիկների ժամանակ:
- Ծառերի կտրում և բուսականության մաքրում:
- Մանրամասն կառուցվածքային ստուգումների անցկացում բարձր հրդեհավտանգ տարածքներում:
- Ցանցի պաշտպանության ավելի արագ կարգավորումների իրականացում՝ բարձր հրդեհավտանգ պայմաններում անտառային հրդեհները կանխելու համար:
- Համագործակցություն տեղական հրշեջ գործակալությունների հետ օդային ճանապարհով հրդեհների ճնշման ծրագրի համար (հայտնի է որպես Արագ արձագանքման ուժ):

ԻՄԱՑԵՔ ԱՎԵԼԻՆ PSP-ՆԵՐԻ, ԾԱՆՈՒՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ SCE.COM/PSPS ԿԱՅՔՈՒՄ: